

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 129

«Նա դժոխք իջաւ» – Քրիստոսի քաւութեան գործի նկատմամբ եղած մի ուրիշ թիրիմացութեան կէտ Իր մահւան վերաբերեալ է: Եկեղեցու պատմութեան ընթացքում ոմանք հաստատել են այդ տեսանկիւնը թէ Իր մահից յետոյ Յիսուսի մարմինը գերեզմանը դրեց, բայց Իր հոգին դժոխք իջաւ մինչեւ Իր յարութիւնը:

Ոչ մի տեղ Աստուածաշնչում գտնուում ենք «դժոխք իջաւ» բառերը կամ որեւէ այլ նման արտայայտութիւն վերաբերեալ այդ ինչ որ կատարեց Յիսուսին Իր մահից յետոյ: Այս արտայայտութիւնը իրականում գալիս է Առաքեալների Հանգանակից: Այս եկեղեցու ամենահին հաւատոյ հանգանակներից մէկն է, թագրուելով երկրորդ դարւայ միջին: Այդ կոչւած է որպէս Առաքեալների Հանգանակը ոչ որովհետեւ այն Քրիստոսի առաքեալների ուղղակի աշխատանքն է, իսկ որովհետեւ դրա մէջ գտնուած կէտերը կարելի են հետագծել առաքելական ուսուցման: Սակայն «Նա դժոխք իջաւ» արտայայտութիւնը յայտնուեց Հանգանակում 390 Ք.Յ. թականում: Եւ ուստի եկեղեցու պատմութեան ընթացքում եղել են այս նախադասութեան նկատմամբ շատ մեկնաբանութիւններ, փորձելով մատակարարել աստուածաբանական ուղիղ բացատրութիւն՝ համապատասխան Աստուածաշնչի ուսուցման:

Ոմանք ուսուցանել են թէ Լատին «ինֆերնա» բառը՝ նշանակելով տակ կամ ցած, ակնարկեց Իր մահից յետոյ Յիսուսի մարմնի գերեզման դնելը: Բայց այս կլիմի մի անտեղի աւելացում Հանգանակին քանի որ այդ արդէն նշում է որ Քրիստոսը խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ: Քաւիւնը նշում է թէ այս արտայայտութիւնը հաստատում է թէ Քրիստոսի տանջանքը միմիայն Իր ֆիզիքական մահն չէր, այլ այդ պարունակում էր Իր հոգեւոր տանջանքները – դժոխքի անէծքն ու պատիժը որ մեղաւոր մարդս արժանի է: Այս տեսանկիւնը նաեւ հաստատուած է Հայտելպերկի Կրօնագիտութեան մէջ (Հարցում 44): Բայց այս բացատրութիւնները ակնարկում են դժոխք ոչ թէ որպէս մի տեղ, այլ թէ որպէս ծայրայեղ տագնապի եւ տառապանքի փորձառութիւն՝ որն Յիսուսը կրեց խաչի վրայ ու նախքան Իր մահը, եւ թէպէտ սրանք համապատասխան են Աստուածաշնչի ուսուցման հետ, սակայն նրանք չեն յարմարում Առաքեալների Հանգանակի այդ նախադասութեան շարքի ու նպատակի հետ:

Ուրիշներ, ակնարկելով «ինֆերնա» բառի Յունարէն թարգմանութիւնը իբրեւ «հէյդիզ», բացատրում են թէ այդ նշանակում է մեռելների բնակարանը նախքան յարութիւնը՝ զատ Յունարէն «գեհենա» բառից որն ակնարկում է անաստուածների համար պատժի եւ անմար կրակի վերջնական տեղը. ուրեմն բացատրում է թէ այս արտայայտութիւնը նշանակում է թէ Իր մահից ու թաղումից յետոյ Քրիստոսի հոգին շարունակեց «մեռելների վիճակում, եւ մահւան զօրութեան տակ մինչեւ երրորդ օրը»: Այս է Ուէստմինստըր Ընդարձակ Կրօնագիտութեան մեկնաբանութիւնը (Հարցում 50): Թէպէտ սուրբ գրային ճշգրիտ (Ղուկաս 16:22-23) եւ ընդունելի է, սակայն այն չի թուում թէ աւելացնում է որեւէ նշանակաւոր իմաստ Հանգանակի հնագոյն կերպին:

Նաեւ ուրիշներ սովորեցնում են թէ Իր մահից յետոյ Յիսուսը իսկապէս դժոխք իջեց, բայց ոչ որպէս Իր չարչարանքների շարունակութիւն, այլ որպէսզի յայտարարի յաղթութիւն ու նոյնիսկ քարոզի աւետարանը զանազան խմբերին: Կ'քննենք սրանք յաջորդ սերտողութեան մէջ: Մինչեւ հիմա նշուած տեսանկիւնների մէկ ընդհանուր (համանման) կէտն այն է որ ոչ մէկը ուսուցանում է թէ Քրիստոսը Իր մահից յետոյ պիտի գնար դժոխք որպէսզի տառապէր յաւելեալ պատիժ եւ այդպիսով լրացնէր քաւութեան գործը:

Սակայն կան խմբեր, ինչպէս Խարիզմատիկ Հաւատոյ Խօսքի շարժումը, որոնք ուսուցանում են թէ ի յաւելեալ Նրա ֆիզիքական մահին, անհրաժեշտ էր որ Յիսուսը նաեւ տառապէր հոգեւորապէս դժոխքում, դեւերից չարչարւած: Ոմանք նոյնիսկ աւելի են շարունակում եւ սովորեցնում են որ Յիսուսը հոգեւորապէս մեռաւ, առաւ Իր վրայ Սատանայի բնութիւնը, գնաց դժոխք չարչարելու, եւ ուստի երեք օրերից յետոյ պէտք ունէր վերածնելու Աստուծոյ: Այսպէս ուսուցումներ հերետիկոսային են, Աստուածաշնչի վարդապետութիւնների հակառակ, եւ հարկ է խստութեամբ ու հաստատօրէն մերժել:

Սուրբ Գիրքը ուսուցանում է թէ հոգեւորապէս մեռնելը նշանակում է դառնալ բնութեամբ մեղաւոր, լինել մեղքի ստրուկ, ցանկանալ չարութիւն, եւ լինել Աստուծոյ թշնամի (Եփեսացիս 2:1-3, Յովհաննէս 8:32-34, Հռովմայեցիս 5:10): Խաչի վրայ, թէպէտ Քրիստոս որպէս մեր փոխանորդը համարեց որպէս մի մեղաւոր, սակայն Նա ոչ մէկ կէտում մեղաւոր էր, մնալով անմեղ ու կատարելապէս ուղղարար, եւ միշտ ցանկանալով կատարել Իր Հօր կամքը: Եթէ որեւէ կէտում Քրիստոսը հոգեւորապէս մեռած լինէր, Նա կ'դադրէր լինելու մեր կատարեալ գոհը, եւ շատ աւելի վատ, տեղի կ'ունենար մեղաւոր մարդկային բնութեան եւ աստուածային բնութեան միութիւնը Քրիստոսի անձում. մի բոլորովին անիմաստ եւ հակա սուրբ գրային գաղափար (Ամբակում 1:13ա, Ա. Յովհաննէս 1:5): Աստուածաշունչը յստակ է թէ խաչի վրայ Քրիստոսը կատարեց բոլոր ամեն բան որը մեղաւոր մարդու փրկութեան համար հարկաւոր էր յագեցնելու Աստուծոյ պահանջքը. եւ Իր խաչի վրայ մահից յետոյ Նրա մարմինը թաղուեցաւ, եւ Իր հոգին գնաց լինելու Իր Հօրը հետ (Յովհաննէս 19:30, Ղուկաս 23:43, 46):